## ՇԻՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն նախագծով նախատեսված է Շիրակի մարզի Սպանդարյան համայնքում նախատեսված հողատարածքում կառուցել մանկապարտեզի շենք՝ 13 ամսվա շինարարության տևողությամբ:

Ըստ Շին. կազմակերպման նախագծի շին. աշխատանքները կատարվում են երկու փուլով՝

- նախապատրաստական փուլ;
- հիմնական փուլ:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները՝

- շին. տեղամասի ցանկապատում /հիմնական/;
- ժամանակավոր ջրամատակարարում և էլեկտրամատակարարում;
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պարաստում;
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն:

Հիմնական փուլում կատարվում են շենքի կառուցման աշխատանքները ըստ նշված ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները խրամուղիներում և փոսորակներում կատարվում են 0.5-0.65մ3 շերեփի տարողությամբ "հետ-բահ" էքսկավատորով: Ավելորդ բնահողը տեղափոխվում է շին. հրապարակի տարածքում մինչև 1կմ հեռավորությամբ:

Շենքի շինարության համար ընտրված է պնևմոանիվային կռունկ KC-3572 մակնիշի:

Բոլոր տիպի շին. աշխատանքները պետք է կատարել պահպանելով տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV 2008-ի դրույթների: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան՝ պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Բոլոր տիպի շին. աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար անհրաժեշտ է կազմել «Թաքնված աշխատանքների ակտ» տեխ. հսկողություն իրականացնող մարմնի կողմից, կապալառու կազմակերպության հետ միասին:

Ապրանքային բետոնը պատրաստվում է շին. հրապարակում տեղադրված բետոնա-շաղախային սարքով: Ամրացման աշխատանքների համար՝ միաձույլ ե/բ շրջանակի բետոնը շին. հրապարակ է բերվում բետոնա-շաղախային հանգույցից:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել ՀՀ հակահրդեհային անվտանգության դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ՝

- թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավելի քանակություններ;
- շին. աղբը տեղափոխող մեքենաների թափքը թրջել, ծածկել պ/էթիլենային թաղանթներով՝ թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:

Շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով:

## Անվանացանկ

1. Տեղակայվող մանկապարտեզի շենք

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԸՍՏ ՇԻՆ. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ

- Շին. աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կազմել աշխատանքների կատարման նախագիծ /ԱԿՆ/
- Աշխատանքները կատարել՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆևԿ III-4-2008 դրույթների
- Շին. աշխատանքները կատարել ըստ նշված ժամանակացույցի
- Շին. աշխատանքները սկսել համապատասխան շին. թույլտվություն ստանալուց հետո
- Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ:







### Պայմանական նշաններ

- Սպանդարյան գյուղի տեղակայվող մանկապարտեզի տարածքի ուրվագիծ
- Ժամանակավոր պարսպապատման ուրվագիծ

| | | | |
|---|---|---|---|
| | | Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի նորակառույց մանկապարտեզի տեղակայումով կառուցման նախագիծ | Պատվեր N TSH-09 |
| ՆԳճ | Ռ. Մանուկյան | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ | ՓՈՒԼ / ԹԵՐԹ / ԹԵՐԹԵՐ |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Տ. Մանուկյան | | ԱՆ / 1 / 3 |
| | | ՇԻՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ԱՍՏՂԱՆ ՍԹԸ |